Արձանագրություն N 4
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30 մարտի 2018թ
ժամը 12:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Լուսինե Շարաֆյանը, Հասմիկ Ղուլյանը, Ալիսա Հայրապետյանը,
Շողիկ Ավագյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

Օրակարգ

1. «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից 02.03.2018թ. Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/35 բողոքի վերաբերյալ 22/03/2018թ. կայացրած որոշման քննարկում (որոշումը հրապարակվել է 27/03/2018թ):

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Գնահատող հանձնաժողովի նախագահը ներկայացրեց թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/35 բողոքի վերաբերյալ (կցվում է) կայացրած որոշումը: Հանձնաժողովը ուսումնասիրեց բողոքի վերաբերյալ կայացրած որոշումը և արձանագրեց, որ

ա/ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ -ի կողմից 02.03.2018թ.-ին խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել էր, որ Ընկերությունը հավաստում է, որ գնային առաջարկին կից ծառայությունների մատուցման և փոխարինվող ապրանքների գնացուցակի /հավելված 4.1/ ոչ բոլոր տողերն են լրացված՝ ինչը բացթողում է Ընկերության կողմից:

բ/ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն գտնում է, որ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն պետք է փաստաթղթերը շտկելու հնարավորություն տրվեր:

գ/ Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը Բողոքով խնդրել է վերանայել ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 16.02.2018թ. թիվ 2 արձանագրության 3 կետով «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ -ի հայտի 1-ին չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Խորհուրդը քննելով ներկայացված բողոքը 22/03/2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/35 բողոքի վերաբերյալ որոշում է կայացրել.

ա/ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ -ի կողմից 02.03.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

բ/ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 16/02/2018թ թիվ 3 արձանագրության 3-րդ կետի «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ -ին հայտը 1-ին չափաբաժնի մասով անբավարար գնահատելու մասին որոշումը:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/35 բողոքի վերաբերյալ Խորհրդի կողմից կայացրած որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված պահանջների համաձայն «Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:» որոշեց.

ա/ դադարեցնել 16.02.2018թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով անբավարար գնահատելու մասին կայացրած որոշումը:

բ/ փոփոխել 16.02.2018թ թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումը:

գ/ փոփոխել 16.02.2018թ թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «դ» ենթակետով «Օվնե» ՍՊԸ -ին 1-ին չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցնող ճանաչելու մասին, 27.02.2018թ արձանագրության 4-րդ կետով 1-ին չափաբաժնի համար «Օվնե» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը և 1-ին չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, ըստ որի «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող, հայտի գնահատման արդյունքով որոշեց.

ա/ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի համար գնահատել բավարար:

բ/ ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 1-ին և 2-րդ չափաբաժնի համար:

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրանց հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
նախագահ		Ս. Մաթևոսյան
անդամներ՝		Լ. Շարաֆյան
		Հ. Ղուլյան
		Ա. Հայրապետյան
		Շ. Ավագյան
քարտուղար՝		Գ. Ջանջուղազյան